

носителем чудесной природы и родиной больших умов, имеет огромный потенциал производить органическую косметику и быть лидером этой сферы в территории. В статье представлены возможности производства армянской косметики и преграды, существующие в рынке.

MARY KOCHARIAN

POTENTIAL AND PRODUCERS OF ORGANIC COSMETICS IN ARMENIA

Key words: organic cosmetics, care products, essential oil, anti-allergenic properties.

The market share and the popularity of organic cosmetics keep on growing year by year. These are cosmetics made from exclusively natural ingredients. They contain no harmful elements and have no allergic reaction. Armenia, having an exceptional kind of nature and carrying the powerful human mental potential, has all vital conditions to produce organic cosmetics and export it to the different directions of the world. In the article it's discussed the opportunities of Armenian organic cosmetics production and the obstacles existing in the market.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՈՍՅԱՆ

Արժեթղթերի շուկայի վերլուծություն և
կառավարում, բակալավրիատ, 4-րդ կուրս

ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԱՂԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՎՐԱ

Հիմնաբառեր. բանկային համակարգ, նորմատիվային կապիտալ, պարտավորումների թողարկում, առաջնային շուկա, ավանդների փոկոսադրույք

ՀՀ բանկային հատվածը կարևոր դերակատարում ունի ՀՀ ֆինանսական ոլորտում: Հոդվածը նվիրված է ՀՀ ֆինանսական շուկաների վրա բանկային կապիտալի խոշորացման ազդեցության բացահայտմանը: Այդ նպատակով ուսումնասիրվել են 17 առևտրային բանկերի ընդհանուր նորմատիվային կապիտալի փոփոխությունները, թողարկած բաժնեպատկերների և պարտավորումների տեղաբաշխումները, ինչպես նաև բանկի կողմից ընդունվող ավանդների միջին փոկոսադրույքների փոփոխությունները:


Ժամանակակից տնտեսական կյանքում ֆինանսական հարաբերությունների մեծ մասն իրականացվում է բանկային համակարգի միջոցով: Բանկերը այնպիսի տնտեսական կառույցներ են, որոնց հիմնական գործունեությունը ազատ դրամական միջոցների հավաքագրումն է, վարկերի տրամադրումը, դրամական հաշվարկների կատարումը, տարբեր արժեթղթերի թողարկումը: Ներկա շուկայական տնտեսության պայմաններում Հայաստանի Հանրապետության կարևորագույն խնդիրներից է բանկային գործունեության կարգավորման և վերահսկման համար սահմանված տնտեսական նորմատիվների արդյունավետ կիրառման ապահովումը: Բանկային գործու-

նեության կարգավորումը և վերահսկողությունը միասնական համակարգ է, որը նպատակաուղղված է այդ համակարգի կայունության, հուսալիության և բնականոն գործունեության ապահովմանը:

Բանկային համակարգի կարգավորումը ներկայումս կրում է էական փոփոխություններ՝ կապված Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի կողմից կապիտալի համարժեքության նոր չափանիշների հրապարակման հետ (Բազել III):

Բանկային համակարգը Հայաստանի ֆինանսական շուկայի ամենամեծ ոլորտն է: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործող 17 առևտրային բանկերն ունեին 528 մասնաճյուղ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում, որից 237-ը՝ Երևանում:¹

2018 թ. ՀՀ-ում գործող 17 առևտրային բանկերն են՝ «Արմավիսբանկ», «Ամերիաբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան», «Էվոկաբանկ», «Կոնվերս Բանկ», «Արդշինբանկ», «Արարատբանկ», «Հայէկոնոմբանկ», «ՎՏԲ Բանկ Հայաստան», «Յունիբանկ», «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ», «Արցախբանկ», «Անելիք Բանկ», «Ինեսկոբանկ», «Հայբիզնեսբանկ», «Մելլաթ Բանկ», «Բիբլոս Բանկ»:



Գծապատկեր 1. ՀՀ 17 առևտրային բանկերի նորմատիվային ընդհանուր կապիտալների փոփոխությունների շարժընթացը 2013-2017 թթ. (մլրդ դրամ)²

2014 թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը 2017 թ. հունվարի 1-ից սահմանվել է 30 մլրդ դրամ: Իրականում բարձրացվում է ոչ թե բանկերի կանոնադրական կապիտալի, այլ նորմատիվային ընդհանուր կապիտալի նվազագույն պահանջը: Կանոնադրական կապիտալից բացի, վերջինս ներառում է բանկի չբաշխված շահույթը, գլխավոր պահուստը, երկարաժամկետ ստորադաս փոխառությունները և այլն: Կապիտալի պահանջի այս նոր


¹ https://home.kpmg.com/content/dam/kpmg/am/pdf/2017/Armenian%20Banking%20Sector%20Overview_2017%20Q4_Arm.pdf

² Տվյալները վերցված են բանկերի պաշտոնական կայք-էջերից:

որոշման նպատակը բանկային համակարգի ֆինանսական միջնորդության խորացումն ու երկարաժամկետ հատվածում կայունության երաշխիքների ապահովումն է: Բանկերը այդ պահանջները բավարարելու մի քանի ճանապարհ ունենին՝ սեփական միջոցների կամ նոր բաժնետոմսերի, կորպորատիվ երկարաժամկետ պարտատոմսերի թողարկում: Ինչպես նաև եղան բանկեր, որոնք միաձուլվեցին, կամ որոնց բաժնետոմսերը ձեռք բերվեցին այլ բանկերի կողմից, մասնավորապես՝ «Ինեկոբանկը» գնեց «Պրոկրեդիտ բանկի» բաժնետոմսերը, «Արդշինբանկը» ձեռք բերեց «Առեքսիմբանկ-Գազպրոմ-բանկի» ակտիվները, «ԲՏԱ Բանկը» միաձուլվեց «Հայէկոնոմբանկին», ինչպես նաև «Արարատբանկը» ձեռք բերեց «Հայկական զարգացման բանկի» ակտիվները:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նորմատիվային ընդհանուր կապիտալի ամենամեծ ծավալը «Ամերիաբանկում» է՝ 84,12 մլրդ դրամ, որը գրեթե 2.8 անգամ ավելի է, քան պահանջվող նվազագույն ծավալն է: Նկատենք, որ 2013 թ. դեկտեմբերի 31-ին արդեն իսկ թվով հինգ բանկ բավարարում էր սահմանված նոր պահանջները՝ «Ամերիաբանկ»-ը, «Արդշինբանկ»-ը, «Ալբա-կրեդիտ ագրիկոլ բանկ»-ը, «ՎՏԲ Բանկ Հայաստան»-ը և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան»-ը, որոնցից նույն թվականին ամենամեծ ծավալը պատկանում էր «Ալբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկին»՝ 50,45 մլրդ դրամ՝ 1.6 անգամ գերազանցելով ներկայիս պահանջվող նվազագույն ծավալը: Նշենք նաև, որ 2016 թ. դեկտեմբերի 31-ին «Արցախբանկ»-ը և «Յունիբանկ»-ը դեռևս չէին համալրել իրենց նորմատիվային ընդհանուր կապիտալի պահանջվող նվազագույն ծավալները՝ կազմելով համապատասխանաբար 17,86 մլրդ և 27,02 մլրդ դրամ: Հավելենք նաև, որ բանկերի մեծ մասը 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արդեն համալրել էին իրենց կապիտալի ծավալները՝ բավարարելով պահանջվող նվազագույն մակարդակը:

Հավելենք նաև, որ 2017 թ. տեղաբաշխվել են «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկված 3.211 մլրդ դրամ ծավալի հասարակ անվանական բաժնետոմսերը:




Գծապատկեր 2. ՀՀ առևտրային բանկերի թողարկած պարտապարտմանների ծավալների փոփոխության շարժընթացը 2007-2017 թթ. (մլրդ դրամ)¹

¹ <http://nasdaqomx.am/am/9/trading/10/instruments?page=1>

Դիտարկել ենք 2007-2017 թթ. ընթացքում առևտրային բանկերի՝ պարտքային արժեթղթերի թողարկումները: 2007 թ. միակ թողարկումը կատարվել է «Արարատբանկ» ԲԲԸ-ի կողմից (250 մլն դրամ): 2008-2009 թթ. գրանցվել է թողարկումների աճ՝ 2009-ին կազմելով 1.95 մլրդ դրամ: Սակայն մինչև 2016 թ. մեծ ակտիվություն չի նկատվել՝ դրամային պարտատոմսեր թողարկելու հետ կապված, նույնիսկ եղել են տարիներ, երբ ընդհանրապես թողարկումներ չեն իրականացվել: Դրամային պարտատոմսեր թողարկելու գագաթնակետը եղել է 2017 թ. (7,7 մլրդ դրամ), որը 30.8 անգամ ավելի է, քան 2007 թ.:

Նշենք նաև, որ 2018 թ. առաջին կեսին թողարկումներ ևս իրականացվել են. «Յունիբանկ» ԲԲԸ-ն թողարկել է 250 մլն դրամ ծավալի պարտատոմսեր:



Գծապատկեր 3. Բանկային համակարգի իրացվելիության շարժընթացը 2013-2017 թթ.¹

Գծապատկերից երևում է, որ ընթացիկ իրացվելիության ցուցանիշը (իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ) 2014 թ. դեկտեմբերի 31-ից մինչև 2016 թ. դեկտեմբերի 31-ը ցուցաբերել է հստակ աճի միտում՝ առավելագույնին հասնելով 31.12.2016 թ. (170.8%), այնուհետև ընթացիկ իրացվելիության մակարդակը սկսում է նվազել՝ 31.12.2017 թ.՝ 141.7%:


Ընդհանուր իրացվելիությունը (իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ) 2014 թ. դեկտեմբերի 31-ից մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ը նախկին 21.1%-ի նկատմամբ աճել է 11%-ային կետով (32.1%):

Նշենք նաև, որ վերոնշյալ ցուցանիշները ՀՀ ԿԲ սահմանած մակարդակից բարձր են:

Գծապատկերից ակնառու է բանկերի կողմից տրամադրվող վարկերի միջին կշռված տոկոսադրույքների նվազումը: 2013 թ. դեկտեմբերի 31-ին բանկերի կողմից տրամադրվող մինչև 1 տարի ժամկետայնության վարկերի տոկոսադրույքը եղել է 15.04%: Դիտարկվող ժամանակահատվածում նշված վարկերի ամենաբարձր տոկոսադրույքը եղել է 2014 թ. (16.21%), մինչդեռ


¹ www.cba.am

2017 թ. դեկտեմբերի 31-ին այն եղել է 13.26%՝ 2014-ի համեմատ նվազելով 1.75%-ային կետով (13.26%):



Գծապատկեր 4. ՀՀ առևտրային բանկերի տրամադրած վարկերի միջին կշռված տոկոսադրույքների փոփոխությունները 31.12.2013-31.12.2017 թթ.¹

Նույնը կարող ենք ասել նաև բանկերի կողմից տրամադրվող 1 տարուց ավելի ժամկետայնության վարկերի տոկոսադրույքների մասին: 2013 թ. դեկտեմբերի 31-ին այն եղել է 18.29%, սակայն 2017 թ. դեկտեմբերի 31-ին եղել է 12.47%՝ ուսումնասիրված տարիների ընթացքում նվազելով 5.82%-ային կետով:



Գծապատկեր 5. ՀՀ առևտրային բանկերի ընդունած ավանդների միջին տոկոսադրույքների փոփոխությունները 31.12.2013-31.12.2017 թթ.²

Հետևելով գծապատկերին՝ կարող ենք ասել, որ վերջին ժամանակներս բանկային ավանդների տոկոսադրույքները բավականին ցածր են: 2013 թ. մինչև 1 տարի ժամկետայնության բանկային ավանդների միջին տոկոսա-

¹ www.cba.am

² www.cba.am

դրույքը եղել է 10.55%, որը մինչև 2015 թ. աճել է (13.55%), սակայն արդեն 2016 թվականից ի վեր ունեցել է նվազման միտում՝ մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ը 5.2%-ային կետով իջնելով (8.35%): Նույն ճակատագիրն ունի նաև 1 տարուց ավելի ժամկետայնության բանկային ավանդների տոկոսադրույքների կորի հետագիծը: Ուսումնասիրվող տարիների ընթացքում 2015 թ. դեկտեմբերի 31-ին տոկոսադրույքը եղել է ամենաբարձրը (14.45%), որը, սակայն, նույնպես մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ը նվազել է՝ հասնելով 9.7%-ի (4.75 տ.կ.): Հաջորդիվ ուսումնասիրենք ՀՀ առևտրային բանկերի թողարկած կորպորատիվ դրամային և դոլարային պարտատոմսերի արժեկտրոնի միջին եկամտաբերության փոփոխության շարժընթացը:



Գծապատկեր 6. *Առևտրային բանկերի թողարկած դրամային և դոլարային պարտատոմսերի արժեկտրոնի միջին եկամտաբերությունը¹*

2007 թ. «Արարատբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկված դրամային պարտատոմսերի արժեկտրոնի եկամտաբերությունը 8% է եղել: 2013 թ. գրանցվել է արժեկտրոնի ամենաբարձր եկամտաբերությունը (13%)՝ թողարկված վերոնշյալ բանկի կողմից): Ինչպես տեսնում ենք, վերջին երկու տարիների ընթացքում պարտատոմսերի արժեկտրոնի միջին եկամտաբերությունը սկսել է իջնել՝ 2017 թ. 11.02%:

Ինչ վերաբերում է դոլարային պարտատոմսերի արժեկտրոնի եկամտաբերությանը, ապա կարող ենք ասել, որ այն ունի անընդհատ նվազման միտում. 2012 թ. եղել է 9%, որը 3.02%-ային կետով ավելի է, քան 2017 թ. տվյալները (5.98%):

Նշենք նաև, որ 2017-ին թողարկված եվրո արժույթով պարտատոմսերի արժեկտրոնի միջին եկամտաբերությունը եղել է 4.15%:

Ինչպես տեսնում ենք, ուսումնասիրված տարիներին առաջնային շուկայում տարբեր ժամկետայնության պետական պարտատոմսերի եկամտաբերության փոփոխությունները միևնույն հետագիծն ունեն: Նշենք, որ գծա-

¹ <http://nasdaqomx.am>

պատկերում ներկայացված է առաջնային շուկաներում տեղաբաշխված տվյալ ժամկետայնության արժեթղթերի միջին կշռված եկամտաբերությունը:



Գծապատկեր 7. Առաջնային շուկայում պետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերության փոփոխությունները 2013-2017 թթ.¹

2013 թ. պետական երկարաժամկետ պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը եղել է 15.03%, որից հետո այն նվազել է՝ 2014 թ. 11.65%: Դիտարկված ժամանակահատվածում ամենաբարձր միջին եկամտաբերությունը եղել է 2015 թ. (16.11%), սակայն հետո դրսևորել է նվազման միտում՝ 2017-ին հասնելով 11.53%-ի:

2017 թ. առաջնային շուկայում պետական միջնաժամկետ պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը եղել է 8.85%, որը 4.35%-ային կետով պակաս է, քան է 2017 թ. (13.20%):

2017 թ. առաջնային շուկայում պետական կարճաժամկետ պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը եղել է 6.50%:

Հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների, վերլուծությունների և հետազոտությունների արդյունքում հանգեցինք այն եզրակացությանը, որ առևտրային բանկերի գործունեության կարգավորումը և վերահսկումը իրենց կարևորության առումով միշտ էլ եղել են արդիական, քանի որ կարգավորման շրջանակը ընդգրկում է մի ոլորտ, որը մեր տնտեսության համար շարժիչ գործոն է: 2014 թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը 2017 թ. հունվարի 1-ից սահմանվել է 30 մլրդ դրամ: 2017 թվականը շրջադարձային էր կորպորատիվ պարտատոմսերի շուկայի համար. թողարկման ծավալները կազմեցին ավելի քան 74 մլրդ դրամ, որոնց մեջ առյուծի բաժինը պատկանում է հենց առևտրային բանկերին: Թողարկումների ծավալի նման մեծացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2015 թվականից Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին բավարարող պարտատոմսերով ներգրավված միջոցների համար առևտ-

¹ www.cba.am

րային բանկերի կողմից ԿԲ-ում պարտադիր պահուստների ձևավորման նորման հաշվարկվում է նվազեցված դրույքաչափերով, իսկ որոշ տեսակի պարտատոմսերով ներգրավված միջոցների դիմաց անգամ պահուստաֆոնդ չի ձևավորվում: Ինչպես նաև տեսանք, որ նկատվել է ավանդների տոկոսադրույքների նվազում, որը կորպորատիվ պարտատոմսերի շուկայի զարգացման հնարավորություն կտա, քանի որ ավանդների տոկոսադրույքները տնտեսավարող սուբյեկտներին ստիպում են գտնել ներդրման ավելի եկամտաբեր այլընտրանք, որը և կարող են կորպորատիվ պարտատոմսերը հանդիսանալ: Կատարված ուսումնասիրություններից ելնելով՝ կարող ենք առաջարկել, որ այն առևտրային բանկերը, որոնք ինստիտուցիոնալ առումով կայացած են և ունեն կորպորատիվ կառավարման բարձր մակարդակ, շարունակեն կորպորատիվ պարտատոմսերի, հատկապես՝ երկարաժամկետ, թողարկումները, որը ի վերջո կարող է հանգեցնել կապիտալի շուկայի զարգացմանը:

ОГАННЕС КОСЯН

ВЛИЯНИЕ УВЕЛИЧЕНИЯ БАНКОВСКОГО КАПИТАЛА НА ФИНАНСОВЫХ РЫНКАХ АРМЕНИИ

Ключевые слова: *банковская система, нормативный капитал, выпуск облигаций, первичный рынок, процентная ставка депозитов.*

Банковская система РА играет большую роль для финансовой системы РА. Статья посвящена обнаружения влияния увеличения банковского капитала на финансовых рынках РА. Чтобы обнаружить это влияния, были изучены изменения общего нормативного капитала 17 торговых банков, распределение долговых облигаций, а также изменения средних процентных ставок депозитов принимаемые банком.

HOVHANNES KOSYAN

THE INFLUENCE OF THE INCREASE OF BANKING CAPITAL ON THE ARMENIAN FINANCIAL MARKETS

Key words: *banking system, normative capital, bonds issue, primary markets, deposit interest rate.*

Armenian banking part plays an important role in Armenian financial part. The article is dedicated to the discovery of the influence of the increase of banking capital on Armenian financial markets. To discover that influence the changes of the overall normative capital of 17 commercial banks, the placements of the issued bonds and also the changes of the average deposit interest rates accepted by bank have been studied.